



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 7.2, 7.6, 7.7 կետերի, ինչպես նաև 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի պահանջներով, հաշվի առնելով «Փաստաբանի օր» սահմանելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2015 թվականի ապրիլի 25-ին, ժամը 12:00-ից Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեում (Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի վարչական շենքում) հեռակա կարգով հրավիրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ ««Փաստաբանի օր» սահմանելու հարցը քննարկելու մասին» օրակարգի հարցով:

2. Սահմանել, որ քվեարկությունը սկսվում է 2015 թվականի ապրիլի 25-ին ժամը 12:00-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:

3. Հաստատել ««Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին» կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

4. Հաստատել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի նիստի մասին ծանուցման ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

5. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝

- ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի նիստի մասին ծանուցել փաստաբաններին էլեկտրոնային փոստով, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի ինտերնետային կայքէջում և վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 2) հայտարարությունների ցուցաբերակի վրա ծանուցումը հրապարակելու միջոցով.
- օժանդակել հաշվիչ հանձնաժողովին՝ ժողովի կազմակերպման և

**անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝
ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:**

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Ջոհրաբյան

**18 մարտի 2015թ.
թիվ 76-L
ք. Երևան**